887 Քայլում էի ես ճամփեքով կորած, մոլորված,

1. Քայլում էի ես ճամփեքով կորած, մոլորված,
Տանում էր սև օձի գիրկը ճամփաս մոլորված,
Բայց գտա ես ճամփան փշոտ ու միշտ քարքարոտ,
Որ տանում է դեպի երկինք՝ Հայր Աստծո մոտ:

Այս ճամփի վերջում Հիսուսն է կանգնած,
Կանչում է Իր գիրկը մոլորված մարդկանց,
Թեև ճամփաս նեղ է, փշոտ ու միշտ քարքարոտ,
Բայց տանում է դեպի երկինք, Հայր Աստծո մոտ:

2. Պատրաստված է ճամփան երկնի Հիսուսի ձեռքով,
Քայլում եմ ես ճանապարհով այդ երկինք տանող:
Թեև ճամփաս նեղ է, փշոտ ու միշտ քարքարոտ,
Բայց տանում է դեպի երկինք, Հայր Աստծո մոտ: